

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/8

15 հունվարի 2013թ.

Քննարկվեց «Լինք Ավիա» ՍՊԸ 27.12.2012թ-ի բողոքը «ԿԱ ՊԵԿ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 17.12.2012թ. թիվ 066290 որոշման դեմ:

«Լինք Ավիա» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

որոշման նկարագրական մասում շարադրվածն ընդհանրապես իրականությանը չի համապատասխանում: Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 066290 առ 17.12.2012թ. որոշման մեջ վարչական մարմինը նշել է, որ ես նախ հրաժարվել եմ ծանոթանալու ստորագրել «ԿԱ ՊԵԿ նախագահի ստուգման հանձնարարագիրը, այնուհետև խոչընդոտել եմ ստուգման անցկացմանը: Մինչդեռ ընդհակառակը, 16.10.2012թ-ին իբրև ստուգում իրականացնելու նպատակով «Լինք Ավիա» ՍՊԸ են ներկայացել անձինք և պահանջել թույլատրել ընկերությունում իրականացնել հաշվապահական փաստաթղթերի ուսումնասիրություն: Վերոնշյալ անձանցից պահանջել եմ ««-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» «« օրենքով նախատեսված կարգով ծանոթանալու նպատակով ինձ ներկայացնել «ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից օրենքով սահմանված կարգով տրված ստուգման հանձնարարագիրը և հիմնավորումը, քանի որ մենք ցույց ենք տվել «« ոստիկանության պահանջով «Լինք Ավիա» ՍՊԸ-ում ստուգում նշանակելու մասին 07.05.2012թ. հանձնարարագիրը, որի ակտը կազմվել է 07.06.2012թ. «« Ֆինանսների նախարարության աշխատակազմի Ֆինանսական վերահսկողության տեսչության գլխավոր վերահսկողների կողմից: Մեր իրավունքն էր իմանալու քննիչի պահանջը նորից ստուգում պահանջելու շարժառիթը, ինչին ի պատասխան ստուգում իրականացնող անձինք ոչ միայն հրաժարվել են ստուգման հանձնարարագիրը ներկայացնելուց, այլև արհեստականորեն առաջացրել են տարածայնություններ և վիճաբանություն՝ նպատակ հետապնդելով ստեղծել տպավորություն, իբրև ես խոչընդոտում եմ ստուգման անցկացմանը: Ավելին առկա են հիմնավոր կասկածներ առ այն, որ իբրև ստուգումներ իրականացնելու նպատակով ընկերություն ներկայացած անձինք մինչև ստուգումների անցկացումն իսկ նախապես մտադրված են եղել ստեղծել տարածայնություններ՝ իմ նկատմամբ վարչական տուգանք նշանակելու համար: Դա է վկայում «ԿԱ ՊԵԿ-ի կողմից կազմված վարչական ակտի և դրա ուղեկցական գրության ժամանակագրական տարբերությունը: Այսպես, Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 066290 որոշումը կայացվել է 17.12.2012թ-ին, մինչդեռ թիվ 30892/11-2 ուղեկցական գրությունը, որով ես ստացել եմ նշված որոշումը, ելքի անստորագիր անկյունային դրոշմակնիքով թվագրված է 12.12.2012թ.-ով: Այսինքն, վարչական մարմինը մինչև վարչական ակտի կայացումը արդեն իսկ տեղյակ է եղել դրա հիմքերին ու բովանդակությանը: 2012թ. նոյեմբերի 1-ին «Լինք Ավիա» ՍՊԸ-ն ստացել էր թիվ 28229/11-2 ծանուցագիր և մենք «ԿԱ ՊԵԿ ներկայացանք ծանուցագրով պահանջված օրը՝ 09.11.2012թ.: Իրավաբանական վարչությունում մենք տեղեկացանք, որ «« Ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնի ավագ քննիչի կողմից մասնագիտական ստուգում նշանակելու մասին 10.08.2012թ. որոշում է եղել և որի հիման վրա էլ կազմվել է «ԿԱ ՊԵԿ նախագահի 18.09.2012թ թիվ 1003894 հանձնարարագիրը:

Ծանոթանալով գործին առնչվող տեղեկատվությանը, մենք նույն օրը՝ 09.11.2012թ-ին «ԿԱ ՊԵԿ նախագահին և «« Ոստիկանության ՔԳՎ, Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնի պետին դիմում ենք հղել առ այն, որ մեզ պաշտոնապես տրամադրվի համապատասխան փաստաթղթերը՝ թիվ 1003894 հանձնարարագիրը և քննիչի 10.08.2012թ. որոշումը: Մինչ օրս՝ ավելի քան 30 օր, մեր ընկերությունը չի ստացել համապատասխան հանձնարարագիրը /ինչպես նաև քննիչի որոշումը կամ լուսապատճենը/:

Ընկերության աշխատակիցները և տնօրենը չեն խոչընդոտել ՀՀ պետական բյուջեի հետ պարտավորությունների փոխհարաբերությունների ճշտության ստուգման գործընթացին և հավելում են, որ ստուգող անձանց միայն խնդրել ենք ներկայացնել և հանձնել ՀՀ ԿԱ ՊԵԿ թիվ 1003894 հանձնարարագիրը, նշելով նաև իրավական հիմքերը:

Ինչ վերաբերվում է իմ որպես հարկ վճարողի պաշտոնատար անձի կողմից խոչընդոտողի այլ գործողությունների հետևանքով ստուգման կամ այլ կերպ հարկային պարտավորությունների հաշվարկման հարկային մարմինների գործողությանը՝ հայտնում ենք, որ մեր գրասենյակում հարկային մարմինների կողմից չի կազմվել և ինձ չի ներկայացվել արձանագրություն խոչընդոտման մասին, ըստ ՀՀ կառավարության կողմից սահմանված ձևի, ինչպես նաև, հայտնում ենք, որ համաձայն «Ստուգումների մասին» ՀՀ օրենքի ընկերությունում չի սկսվել ստուգում հարկային տեսուչների այցելության հաջորդող եռօրյա ժամկետից հետո, չի պահանջվել որևէ փաստաթղթեր կապված ստուգման հետ: Ավելին, հարկային մարմնի կողմից ընկերությանը չի ուղարկվել հանձնարարագիրը և գրավոր ձևակերպված օրինական պահանջը, այսինքն՝ չէր կարող լինել որևէ խոչընդոտում մեր կողմից:

Առկա չեն ՀՀ կառավարության 29.07.10թ. թիվ 972-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ կետի հատկանիշները:

Հարկ է ավելացնել, որ մինչ օրս որևէ տեղեկություն առկա չէ ստուգման անցկացման, ստուգման հանձնարարագրի պահանջների կատարման վերաբերյալ՝ տպավորություն ստեղծելով, որ իմ նկատմամբ վարչական ակտ ընդունելուց հետո այդ ստուգման հանձնարարականը կորցրել է իր անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Տվյալ դեպքում խախտվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասի, 279-րդ հոդվածի պահանջները:

Բողոքարկվող վարչական ակտը նշում չի պարունակում այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմինն հիմք են տվել ընդունելու համապատասխան վարչական ակտը: Այսինքն, վարչական ակտում չկա որևէ իրավադրույթ, թե ինչ հիմքով է ընդունվել նման վարչական ակտը: Վարչական գործի միակողմանի ուսումնասիրության հետևանքով ուսումնասիրվել է բացառապես վարչական մարմնի ներկայացուցիչների հայտարարությունները, որևէ նշում առկա չէ իմ առարկությունների մասին, որոշման մեջ նշված չէ ակտի ընդունման իրավական հիմնավորումները, առկա չէ մեղքը հիմնավորող որևէ արժանահավատ ապացույց:

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը խնդրում է բեկանել Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 17.12.2012թ. թիվ 066290 որոշումը և վարչական գործի վարույթը կարճել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀ վարչության պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնի ավագ քննիչի «Մասնագիտական ստուգում նշանակելու մասին» որոշումը և ղեկավարվելով ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահը, 18.09.2012թ-ին հրապարակել է թիվ 1003894 հանձնարարագիրը (այսուհետ՝ հանձնարարագիր) «Լինք Ավիա» ՍՊԸ-ում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ:

Հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձինք ղեկավարվելով ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով 16.10.2012թ-ին այցելել են ք.Երևան, Հր.Քոչարի 19 հասցեում գտնվող «Լինք Ավիա» ՍՊԸ գրասենյակ, որտեղ ընկերության տնօրեն Ա.Սարգսյանին տեղեկացնելով այցելության նպատակի մասին ներկայացրել են հանձնարարագիրը: Սակայն, Ա.Սարգսյանը

հրաժարվել է ստորագրել և ստանալ հանձնարարագրի օրինակը: Հանձնարարագիրը ստորագրելուց և ստանալուց հրաժարվելու մասին արձանագրություն կազմելու նպատակով ստուգումն իրականացնող անձինք հրավիրել են ընթերականեր, որոնց ներկայությամբ Ա.Սարգսյանը կրկին հրաժարվել է ստորագրել և ստանալ հանձնարարագրի օրինակը: Արդյունքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք (ընթերակաների ներկայությամբ) փաստի առթիվ կազմել են «Ստուգման հանձնարարագրին ծանոթանալուց հրաժարվելու մասին» արձանագրություն:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, ... : Վերջինս պարտավոր է ստորագրել 1 օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է ստուգող պետական մարմնի պաշտոնատար անձին»:

Իր հերթին, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» կետի համաձայն. «Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են՝

ա) չխոչընդոտել ստուգումների ընթացքին, կատարել ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները.»:

Քննարկվող դեպքում «Լինք Ավիա» ՍՊԸ տնօրեն Ա.Սարգսյանի կողմից խախտվել են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 10-րդ հոդվածի «ա» կետի պահանջները: Մասնավորապես, հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձանց կողմից Ա.Սարգսյանին ներկայացվել է հանձնարարագրի օրինակը, սակայն վերջինս հրաժարվել է ստորագրել այն և ստորագրված օրինակը ետ վերադարձնել ստուգող պետական մարմնի պաշտոնատար անձանց, որի հետևանքով խոչընդոտել է ստուգումների ընթացքին և չի կատարել ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները:

Հ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալը, ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 244.14 հոդվածի դրույթներով, քննելով 16.10.2012թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը 17.12.2012թ-ին կայացրել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 066290 որոշումը, որի համաձայն «Լինք Ավիա» ՍՊԸ տնօրեն Ա.Սարգսյանը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182.1 հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 250.000 դրամի չափով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Մերժել «Լինք Ավիա» ՍՊԸ 27.12.2012թ-ի բողոքը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 17.12.2012թ. թիվ 066290 որոշումը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձինք կրթվածության բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ